ՀՀ Տավուշի մարզի Լուսաձորի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ՝ աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի /ծածկագիր 3.3-1/ համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

02.02.2015

Հայտատու՝ ՀՀ Տավուշի մարզի Լուսաձորի գյուղապետարան
«Համայնքային ծառայության մասինե ՀՀ օրենքի 14-րդ հոդված

ԼՈՒՍԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝
ԼՈՒՍԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
Լուսաձորի գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-1):
Երկրորդ կարգի մասնագետը՝
ա) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
բ) միջոցներ է ձեռնարկում համայնքի բյուջե մուտքերի ապահովման ուղղությամբ.
գ) հետևում է քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին.
դ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
ե) պարբերաբար իրականացնում է համայնքի երեխաների սոցիալ-հոգեբանական և առողջական կարիքների գնահատումը.
զ) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների անհատական զարգացման ծրագրերի մշակմանը, նրանց հետ տանում համապատասխան խորհրդատվական և զարգացնողական աշխատանքներ.
է) քարտուղարի հանձնարարությամբ համագործակցում է համայնքում կրթական, սոցիալական և առողջապահական ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ և հանդիսանում է կապող օղակ ընտանիքների և ծառայություններ մատուցողների միջև.
ը) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ
թ)մշտական այցելություններ է կատարում երեխաների ընտանիքներ, ծանոթանում ընտանիքի խնդիրների հետ և անհրաժեշտության դեպքում սոցիալ-հոգեբանական օգնություն է ցույց տալիս մտավոր և ֆիզիկական դժվարություններ ունեցող

երեխաներին.
ժ)հետևում է երեխայի հաշվառման տեղեկատվական համակարգում երեխաների տվյալների մուտքագրմանն ու պարբերաբար թարմացմանը : Ստեղծում է տվյալների բազա կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների մասին.
ի)նպաստում է համայնքում ներառական գաղափարների տարածմանը, աջակցում է հանրային կրթության միջոցառումների և իրազեկության բարձրացման քարոզարշավների կազմակերպմանը.
լ) կատարած աշխատանքների մասին կազմում է հաշվետվություններ և ներկայացնում քարտուղարին.
Երկրորդ կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:
Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝
ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն.
բ) ունի՝Համայնքային ծառայության մասին՝,՝Տեղական ինքնակառավարման մասին՝, ՝Տեղական տուրքերի և վճարների մասին՝,՝Հողի հարկի մասին՝,՝Սոցիալական աջակցության մասին՝,՝Պետական նպաստների մասին՝,՝Իրավական ակտերի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
ա) գրավոր դիմում մրցույթային հանձնաժողովի անունով,
բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. մարտի 3–ի թիվ 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
դ) հայտարարություն այն մասին, որը ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
ե) «Համայնքային ծառայության մասինե ՀՀ օրենքի 12–րդ հոդվածի «եե կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),
է) անձնագրի պատճենը:
Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Լուսաձորի գյուղապետարանում և Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, ամեն օր ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի օրերից:
Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերը, պատճենները ետ չեն վերադարձվում:
Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Լուսաձորի գյուղապետարան (գ.Լուսաձոր, հեռ.՝ 094-96-79-47,093-75-67-85) և Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (2-րդ հարկ, հեռ.՝ 0263-3-16-97):
Մրցույթը կկայանա 2015թ մարտի 5-ին ժամը 11.00-ին՝ Լուսաձորի գյուղապետարանում:
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2015թ. փետրվարի 18–ը:

Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, գ. Լուսաձոր

Հեռ..՝ +374 94 96 79 47

Էլ. փոստ՝ lusadzor.tavush@mta.gov.am